

26. 055

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂ ԿՈՈԹԵՐԱՏԻՎԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԱԼՈՂԻ”

ՁԵՐԵՎԱՆ

1925 թ

334.5

19-19

Ա

ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ ՀԱՅԿՈՂՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տիկոնիքով. — Բնչակիս անել, վոր կոսպերատիվի գործերը լավանան. — զո՞նավոր շապիկով, 32 յերես՝ զինն և 20 կոպեկ.
2. Կոսպերատիվի առաջին բայլերը. զո՞նավոր շապիկով, յերես 40՝ զինն և 30 կոպեկ.
3. Փ. Ֆուլան. — Դյուղացի, ուժեղացրու կոսպերացիան 20 յերես, նկարազարդ շապիկով՝ զինն և 5 կոպեկ.
4. Հ. Տ. Մ. — Բնչակիս պետք և լինի կոսպերատիվի գործականություն նկարազարդ շապիկով՝ զինն և 8 կոպ.
5. Բնչակիս հիմնել կոսպերատիվ խանութ՝ զինն և 10 կոպ.
6. Գոմիքնով. — Բնչակիս պետք և հաշիվ տա սպասողական բնկերության վարչությունը.
7. Փ. Ֆուլան «Կորչեն չարժիները» 16 յերես՝ պատկերազարդ զինն և 8 կոպեկ.

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

(ԹԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. Զայանով. — Կոսպերացիայի նամառու զարմնեց:
2. Մակենով. — Սպաս կոսպերացիայի անցյալն ու ներկան:
3. Ճեկի. — Մուրժակ:
4. Առավարդար. — Կոսպերացիան ինչու նամար և պետք դուզացուի:
5. Խոժմենի. — Բնչ պետք և խման ամեն մի բանվոր:
6. Գենիսով. — Կազմակերպեցեր խանութային հանձնաւ ժողովներ:
7. Ճարով. — Հաշվապահության նամառու ձեռնորդ:
8. Կեօժենցեվ. — Կազմակերպիք ինքդ բեզ:

Ն. ՊԱԺԻՏՆԱԿ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊՈՒԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԵՍ ՊԵՏք Ե ՀԱՇԻՎ ՏԱ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿԱԳԻ»

ՏԵՐԵՎՈՐ

1925

17 JUL 2013

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԻ

I. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԽԸՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոռպերատիվի տերը կոռպերատիվի անդամներն են։
Անդամների հանձնարարությամբ կոռպերատիվը ընկերության աշխատանքը ղեկավարում է նրանց կողմից ընտրված վարչությունը։ Կոռպերատիվը կանոնադրության համաձայն՝ վարչությունը իր աշխատանքի մասին հաշիվ և տալիս անդամների ընդհանուր ժողովին, կամ նրանց լիազորների համագումարին։

Վարչության այսպիսի հաշվետվությունը մեծ նշանակություն ունի։

Ցեթե կուղեք, վարչությունը իր աշխատանքի ընթացքում կատարելու յե այն խնդիրներն ու ցուցմունքները, վոր նրան տրվում են փայտաերերի ընդհանուր ժողովի կողմից։ Իր հաշվետվությամբ վարչությունը պարտավոր ե անդամներին տեղեկացնել, թե ինքը այդ խնդիրներն ու ցուցմունքները ինչպես ե կատարել։ Վարչությունը ինչքան շուտ-շուտ ե հաշիվ տալիս իր անդամների ընդհանուր ժողովին, այնքան ավելի հեշտ ու արագ ե կատարվում կոռպերատիվի աշխատանքը։

Կոռպերատիվի անդամները հաշվետու ժողովու և պետք ե միասին քննեն իրենց կոռպերատիվի ամեն մի քայլը։ Այդպիսով կպարզվեն կոռպերատիվի հաջողությունները, և պակասություններն ու պատահած սխալները։ Այդպիսով կարելի յե վորոշել, թե վարչությունը ինչքան ուղիղ ե տարել կոռպերատիվի աշխատանքը։ Հաշվետու ժողովը պետք ե գնոնի, թե կոռպերատիվից ստացված ոգուտի հետ ինչպես պետք ե վարվել—

ՅԹԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրամ. № 19 թ

Պատու. № 3269

Թիրաժ 3000

Բնչ նպատակի համար և վորքան գումար պետք ե հատկացնել: Իսկ յեթե կոռպերատիվը վնաս ե ունեցել, հաշվետու ժողովը միջոցներ ու հնարավորություններ պետք ե ցույց տա՝ այդ վնասը ծածկելու համար:

Աշխատանքի մեջ կատարված սխալներն ու պակասությունները պարզելով՝ անդամները կկարողանան հետագա աշխատանքները ավելի ուղիղ գծել: Յեթե կարիք կլինի, ապա հաշվետու ժողովը կկարողանա իր կոռպերատիվի վարչությունը վերընտրել: Իր միջից կընտրի չքավոր գյուղացիության շահերը պաշտպանող, աղնիվ, փորձած ու աշխատասեր վարչություն:

Սպառողական ընկերության աշխատանքը ճիշտ կերպով ու ամբողջությամբ հաշվի առնելը դժվար է: Այդ պատճառով վարչությունից պետք ե պահանջել իր աշխատանքի լավ և պարզ հաշվետվություն: Ուրիշ կերպ դժվար կլինի վորոշել—կոռպերատիվը լավ ե աշխատել, թե վատ: Վարչության աշխատանքի շատ սխալները աննկատելի կմնան: Դրա հետևանքը այն կլինի, վորսպառողական ընկերության աշխատանքն ել հետ կտարվի սխալ ու վատ ձևով: Այդ պատճառով ել, ավելի լավ ե վարչության հաշվետվությունը քննելու համար մի որ ավել կորցնել, թան թե ամեն ինչ հաշվի չառնել: Անհրաժեշտ ե մանրամասն ցուցմունքներ տալ, թե ինչ սխալներ կան և այդ սխալները ինչպես պետք ե շտկել:

Վատ ե կոռպերատիվի այն տերը—անդամը, վոր չըգետե, թե ինչպես ե աշխատում իրենց գործը կատարողը, այսինքն իրենց վարչությունը: Արդյոք վարչությունը իր աշխատանքով պաշտպանել ե հասարակական շահերը—աշխատանքը կոռպերատիվի անդամների կամքնվ ե տարփել: Վարչության հաշվետվությունը քննելիս՝ կոռպերատիվ աշխատանքին վերաբերվող և վոչ մի հարցը մոռացության չպետք ե տրվի:

Իսկ այդպիսի հարցերը քիչ չեն:

Պետք ե իմանալ՝ վարչությունը իր աշխատանքի ընթացքում պահպանել ե հասարակական գումարները: Աշխատանքը ողուած ե տալիս, թե դեպի վնասն ե գնում: Պետք ե հաշվի առնել, թե աշխատանքը ինչպես ե տարփել: Պետքական և լավ տեսակի յեն յեղել գնված ապրանքները: Ապրանքների գները թանգ չեն յեղել: Ապրանքները խանութում և պահեստում լավ են պահվել—ապրանքները պահեստում ու խանութում հո չեն փչացել: Կարեւը ե իմանալ, թե գյուղական և այլ մթերքների կոռպերատիվ սպառումը լավ ե կազմակերպված, ճաշարանը լավ ե աշխատում և այլն: Այսպիսի հարցեր շատ կան: Հաշվետու ժողովը կը կարողանա ճիշտ գնահատել վարչության անցյալ աշխատանքը ու հետազա աշխատանքի ավելի լավ ճանապարհ կգծի միմիայն այն դեպքում, յերբ վարչության աշխատանքի ամեն մի քայլը ժողովի համար պարզ ու վորոշ կլինի:

II. ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոռպերատիվի վարչության հաշվետվությունը մեծ գործ է: Այդ հաշվետվությունը շտապ ու «մի կերպ» կատարել չի կարելի: Ավելի լավ ե ամեն ինչ պատրաստել, հաշվի առնել ու կազմակերպել հետզհետե: Նման դեպքերում փայտերերի ընդհանուր ժողովը ել լավ կանցնի, կոռպերատիվի հետազա աշխատանքներն ել ավելի ոգտագետ կլինեն:

Ամենից առաջ պետք ե վորոշել ընդհանուր ժողովի բացման որն ու ժամը: Աշխատանքի որը ժողով նշանակելը նպատակահարմար չի, Այդ դեպքում շատերը ժողովի չեն գա՝ զբաղված լինելու պատճառով: Ավելի լավ ե ընտրել տոն, կամ ազատ որերից մեկը: Անհրաժեշտ ե սկսզբից կազմել նաև ժողովի աշխատանքների որակարգը: Պետք ե ցույց տալ, թե ինչ հարցեր և ինչ կարգով են առաջարկվում ընդհանուր ժողովի քննության համար:

Որակարգը կարելի յե կազմել մուտքորապես այս
ձևով.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Լենուղի» Սպառողական Ընկերության ընդհանուր
ժողովի (Կամ Լիազորների ժողովի), վոր կայանալու յե
Դամարլու գյուղում, 1925-թվի հոկտեմբեր 14-ին, ցերեկ-
վու ժամը 1-ին, Դամարլուի դպրոցի սրահում:

ՀԱՐՑԵՐԸ

1. Վարչության գեկուցումը — Զեկուցող՝ վարչության նա-
խագահ Ընկ. Սահակյան.
2. Առևտրական աշխատանքը — Զեկուց. վարչության ան-
դամ Ընկ. Արամյան.
3. Ճաշարանի աշխատանքը — Զեկուց. վարչության ան-
դամ Ընկ. Արամյան.
4. Ռդուտի բաշխումը — Զեկուցող՝ վարչության նախ.
ընկ. Սահակյան.
5. Վերաստուգիչ հաճն. գեկուց. — Վերաստուգիչ հաճնա-
ժողովի նախ. Ընկ. Վահանյան
6. Բնակչության կոռպերացումը — Հայ. Կոմ. Կուսակ.
Քջիջի քարտուղար. Ընկ. Պետրոսյան
7. Սպագա աշխատանքների ծրագիրը և հաջորդական
կարգը — Վարչ. նախ. Ընկ. Սահակյան
8. Ընթացիկ հարցեր.

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ժողովը կարող ե և փոփոխել որակարգի
հարցերը: Կարող ե լրացուցիչ նոր հարցեր դնել, ինչպես
և կարող ե վորոշ հարցեր բոլորովին հանել որակարգից:
Կազմած ժանուցումը անհրաժեշտ է կոռպերատիվի
բոլոր անդամներին հայտարարել առաջուց՝ ժողովից մի
քանի որ առաջ: Այդ բանը հնարավորություն կտա, վոր
կոռպերատիվի առանձին անդամները առաջուց իրարու-

միջև կարծիքների փոխանակություն ունենան, չափեն ու
վորոշեն որակարգում զրված հարցերի մասին ունեցած
իրենց առաջարկները: Սա մեծ հարմարություն կստեղծի
նաև վարչության անդամների համար, Նրանցից ամեն
մեկը կիմանա, թե ինքը ինչի մասին ե զեկուցելու և
կպարասատի իր զեկուցումը, զեկուցման համար պետք
յեղած նյութերը կհավաքի: Զպետք ե մոռանալ ծանուց-
ման մի որինակն ել «Հայկոռալին» ուղարկելը: Յեթե
«Հայկոռալը» ծանուցումը ժամանակին ստանա՝ կաշխատի
հրահանգիչ ուղարկել՝ անդամների հաշվետու ժողովի աշ-
խատանքին մասնակցելու համար:

Վատ չի լինի, վոր մատածվի նաև այն մասին, թե
ժողովը վորտեղ պետք ե գումարել: Մեզ մոտ, հաճախ
պետք յեղած ուշադրությունը չեն դարձնում կոռպերատիվի
անդամների ընդհանուր ժողովի համար համապատասխան
շենք ընտրելու և այդ շենքը կարգի բերելու վրա: Յեկ
հաճախ, ընդհանուր ժողովին մասնակցողները ժողովի
ժամանակ սենյակի նեղության պատճառով, իրար սըդ-
մում են՝ ծխախոտի ծխից խեղդվում են և ժամերով մնում
են վոտքի վրա կանգնած: Հնարավորության չափ պետք
ե վերացնել այս պակասությունները:

Առաջուց կարելի յե գտնել նստարաններ, վոր բոլորն
ել նստել կարողանան: Նախագահության, այսինքն նա-
խագահի ու քարտուղարի համար պետք ե լինի մի սեղան,
Ավելորդ չեր լինի, վոր հոգ տարգեր սենյակի ներսը
զարդարելու մասին: Կարելի յե պատերին կախել մեր հե-
ղափոխական առաջնորդների նկարները, կոռպերատիվ
ագիտացիոն պլակատներ և կոռպերատիվ լոգունդները:
Կարելի յե յերիտասարդությանը (ԼԿՅԵՄ. Քջիջի անդամնե-
րին) լինդը, վոր սենյակի ներսը, պատերն ու առաս-
տաղը զարդարեն կանաչով: Մեծ, ավելի մաքուր և կա-
հավորված շենքում ավելի հեշտ կարելի յե աշխատել:

Աշքի ընկնող տեղում, մեծ գրատախտակի վրա, պետք եւ տեղափորել կոռպերատիվի աշխատանքներին վերաբեր- վող զանագան աղյուսակներ ու տեղեկություններ, Այդ- ովիսի աղյուսակներով, դեռ մինչև վարչության զեկու- ցումը, ժողովին մասնակցողները կծանոթանան իրենց հատկապես հետաքրքրող հարցերին:

Յեթե սպառողական ընկերությունը գրքերի վաճառ- քով ել ե զբաղվում, կամ յեթե «Հայկոռպից» ու գրախա- նութներից զիրք ձեռք բերելու հնարավորություն ունի, ապա պետք ե աշխատել, վոր ընդհանուր ժողովի որերի ընթացքում ժողովին մասնակցողների միջև տարածվեն կոռպերատիվ ու գյուղատնտեսական գրքույկներ:

Ավելի լավ կինի, վոր ընդհանուր ժողովի սենյակի առաջը սարգվի գրքերի մի դարակ, գրքերի ցուցահանում, Գրքերը պետք ե դասավորել այնպես, վոր ամեն մի գրքի անունը յերեա: Ամեն մի գրքի վրա մատիտով լավ պետք ե գրել գրքի գինը: Գրքերը վաճառելու և դրամն ստա- նալու համար ամեն մի դարակի մոտ անհրաժեշտ ե մշ- տական հերթապահություն նշանակել և հերթապահ կարգել կոռպերատիվի անդամներից կամ ծառայողներից վորեե մեկն: Ընդհանուր ժողովներն ունենում են նաև մի ու- րիշ հիվանդու կողմ—այդ ժողովը կառավարելու ձեն եւ հաճախ մեր լուրջ ու գործնական ժողովներն անցնում են չափազանց մեծ աղմկով և անգործ: Մի վորեա հարցի մասին մի քանի մարդ խոսում են չափից դուրս շատ ու չափից դուրս յերկար, իսկ ուրիշները, ժողովականների հոգնած լինելու պատճառով ձայն չեն ստանում: Հնարա- վորություն պետք ե տալ, վոր բոլոր ցանկացողներն ել խո- սեն: Բայց այդ գեպքում ել չպետք ե թույլատրվի, վոր մի և նույն բանը կրկնեն: Այս ամենին պետք ե հետևի ժո- ղովի նախագահը:

Սովորաբար, վորպեզի ժողովը ավելի կազմակերպված

ձեռվ ընթանա, սկզբից հաստատում են ժողովը կառավա- րելու վորոշ ձե, կամ ինչպես ասում են, մշակում են ուղղամենտ: Ռեզլամենտում ձիշտ կերպով վորոշված պի- տի լինեն ժողովի աշխատանքների ժամերը (թե ժողովները վոր ժամերին են սկսվելու և վոր ժամերին են վերջանա- լու), զեկուցողներին իրենց զեկուցումների համար արվե- լիք ժամանակը, հարցեր տալու կարգը, զեկուցումների առ- թիվ ծագած վեճերին մասնակցելու համար ձայն ստանա- լու և վիճողներին խոսելու համար ձայն տալու ժամանակը և այլն: Ինարկե, ուղղամենտ կազմելիս՝ միշտ ել վորոշում են, թե յուրաքանչյուր խոսող յերկրորդ անգամ խոսելու համար ավելի քիչ ժամանակ և ստանալու, քան առաջին անգամը: Ռեզլամենտը հաստատվում ե ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովի նախագահության ընտրությունից առաջ: Ռեզլամենտը կազմվում ե մոտավորապես այս ձեռվ:

ՌԵԳԼԱՄԵՆՏ

ԵԶՄԻԱԾՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՓԱՅԱ- ՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ:

1. Ընդհանուր ժողովի անդամները, ժողովի աշխա- տանքները ղեկավարելու համար իրենց միջից ընտրում են նախագահություն—նախագահ և քարտուղար:

2. Ընդհանուր ժողովի աշխատանքները տեղի յեն ունենում առավոտյան ժամը 9. ից մինչև ցերեկվա մեկը և ցերեկվա ժամը 3. ից մինչև յերեկո՝ ժամը 8-ը:

3. Ժողովին յեկած անդամների լիազորությունները քննելու համար՝ անդամներն իրանցից ընտրում են ման- դատային հանձնաժողով. այդ հանձնաժողովի աշխատանք- ները պետք ե վերջանան մինչև ժողովում դրված առա- ջարկների ու բանաձեռների քվեարկումը:

4. Զեկուցման համար խոսք տրվում ե 40 լոպեյով: Յեղրափակման խոսքի համար 15 լոպե:

5. Զեկուցողին հարցերը տրվում են գրավոր։ Յեթե հարց տվողը գրավոր տալ չի կարողանում հարցը տափս և բանավոր։

6. Մինչև բոլոր հարցերի համար պատասխան չստանալը զեկուցման մասին ըստ եյության խոսել չի թուլատրվում։

7. Զեկուցման մասին խոսելու համար խոսք ե տրը-վում հերթով։ միենույն զեկուցման մասին կարելի յե խոս-սել յերկու անդամից վոչ ավելի։ Զայն խնդրելու մասին նախագահությանը հայտնվում ե փոքրիկ թերթիկներով կամ մատ բարձրացնելով։

8. Մտքերի փոխանակությանը մասնակցելու համար՝ ամեն մի խոսողի ձայն ե տրվում՝ առաջին անդամը 10 րոպե, իսկ յերկրորդ անդամը – 8 րոպե։

9. Առանձին խոսողների համար այդ ժամանակը կա-րելի յե յերկարացնել՝ յեթե ժողովը այդ բանը կցանկանա-:

10. Անձնական հարցերի պարզաբանման համար նա-խագհությունը կարող ե 5 րոպե տրամադրել՝ միմիայն հերթական հարցի ըննությունից հետո։

11. Քննվող հարցերի մասին կազմվող բոլոր տռա-ջարկներն ու բանաձեռքը նախագահությանը հանձնվում են, յեթե այդ անելու հնարքություն կա՝ գրավոր։

12. Ստացված բանաձեռքն ու առաջարկները ըն-դունվում են բաց քվեարկությամբ, ձեռք բարձրացնելով։

III. ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒԹՈՒՄԸ

Զի կարելի միանգամից սեկ հաշվետու զեկուցում կարդալ կոոպերատիվի աշխատանքի բոլոր բաժինների մա-սին։ Դժվար ե քննել այն զեկուցումը, վորի սեջ իրարու խառնած կերպով խոսվում ե զանազան հարցերի մասին։ Որինակ՝ առևտրի մասին, հաշվետվության մասին, ողու-տի մասին և այլն։ Ավելի լավ ու ավելի հաջող կլինի, յե-թե վարչության զեկուցումը բաժանվի առանձին մասե-

րի։ Որինակ՝ կարելի յե առանձին զեկուցումներ կարդալ այն մասին, թե վարչությունը ինչ ե արել առևտրի զոր-ծում, հացի, գինու, բամբակի, յուղի, պանրի, մորթեղե-նի և այլ մթերքների կոոպերատիվ սպառման գործում, ինչպես նաև բնակչության կոոպերացման զործում և այլն։ Այսպիսի փոքր ու առանձին զեկուցումները ավելի հեշտ և ավելի լավ կքննվեն։ Ամենից ավելի նպատակահարմար ե, վոր զեկուցումը սկսվի հին վարչության աշխատանքնե-րից – ցույց տրվի, թե վարչությունը վոր ժամանակից և ինչպիսի կազմով ե սկսել իր աշխատանքը։ Վարչության մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխությունների մասին ժո-ղովին պետք ե հայտնել, ցույց տալով, թե վարչության անդամներից ովկ և ինչ պատճառներով ե հեռացել, ու թնկնածուներից ովկ ե փոխարինել հեռացած անդամին։ Ապա, ժողովին պետք ե տեղեկացնել, թե վարչության անդամներից վորը ինչ աշխատանք ե տարել։ Սրա հետ-միասին, վարչությունը պետք ե հայտնի, թե ինքը քանի ժողով ե ունեցել և այդ ժողովներում ինչ հարցեր են քննվել։ Այդ դեպքում պարզ կլինի, թե վարչությունը ինչով և ինչպես ե յեղել զբաղված։ Անդամների ընդհանուր ժողովի համար շատ կարևոր է իմանալ, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել հենց կոոպե-րատիվ տնտեսության մեջ։ Ամենից առաջ՝ վարչությունը ինչ արդյունքների յե հասել տեղական իշխանության, բանկերի, պետարդյունաբերության և Հայկոոպի հետ լավ հարաբերություններ ստեղծելու գործում։ Այդ հիմնար-կությունների հետ առողջ տնտեսական ու լավ հարաբե-րություն ստեղծելուց շատ բանով կախված ե կոոպե-րատիվ աշխատանքի զարգացումը։ Յեկ այդ հարաբերու-թյունների մասին անդամների ընդհանուր ժողովը պետք ե իմանալ։

Ապա՝ վարչությունը պետք ե ցույց տա, թե ինքը ինչ ե արել նոր անդամ փայտաբերեր գրավելու խընդ-

ըում և ի՞նչ արդյունքների յե հասել: Լավ կլինի, վոր կոռպերատիվի վարչությունը մանրամասնորեն պատմի, թե ամսե ամիս ի՞նչպես ե կատարվել բնակչության կոռպերացումը: Արդյոք փայտավճարներ շատ են մտցված և առհասարակ անդամներն իրենց փայտավճարները բարեխիղ կերպով են մտցնում:

Գյուղական սպառողական բնկերությունները բարդ տնտեսություններ են: Հաճախ նրանք կազմված են լինում տնտեսական տարբեր մեծություններից, տարբեր մասերից: Այսպես որինակ՝ կոռպերատիվը ունենում է խանութ, ճաշարան, ոթեան, փուռ, կոշկակարանոց, գինու գործարան, շերամապահության և մետաքսի գործաքան, բամբակի ցանքս և այլն:

Զեկուցման մեջ պետք ե ցույց տալ, թե հաշվետուժամանակամիջոցում այդ տնտեսություններից ամեն մեկը ի՞նչպես ե փոփոխվել: Այդ ժամանակամիջոցում վարչությունը կարող եր տնտեսություններից վորեւ մեկը փակել, կապալով տալ, կամ ծախել: Կամ ընդհակառակը: Պարող եր բացել նոր խանութներ ու տնտեսական նոր ձեռնարկներ:

Բոլոր այսպիսի դեպքերում, ամեն մի դեպքի համար առանձին, վարչությունը պարտավոր ե վորոշ կերպով ցույց տալ, թե ինչու ինքը իր աշխատանքի ընթացքում այսպես կամ այնպես ե վարվել: Տնտեսության զանազան մասերի փոփոխության հետ միասին, ծառայողների թիվը նույնպես մեծանալու կամ փոքրանալու յե: Այդ իսկ պատճառով ընդհանուր ժողովին անհրաժեշտ ե զեկուցել, թե ի՞նչպիսի փոփոխություններ են կատարվել կոռպերատիվի ծառայողների կազմի մեջ. ի՞նչքան ե ալդ ծառայողների ոռնիկը և նարավորություն չկա արդյոք ծառայողների քանակը կրճատելու:

IV. Ի՞նչ ՊԵՏՔ Ե ԱՍԵԼ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ:

Առևտրական աշխատանքի մասին կարգավիր իր զեկուցման վրա վարչությունը կորքան կարելի յե շատ պետք ե կանգ առնի: Վորովհետեւ այս հարցն ամենահիվանդու և ընդհանուր ժողովին մասնակցող անդամներին ամենամոտ հարցն ե: Ի՞նչքան լրիվ կերպով լուսաբանվի առևտրական աշխատանքը, այնքան ավելի քիչ հարցեր կտրվեն զեկուցողին և ընդհանուր ժողովը ավելի լավ կը կարողանա քննել իր կոռպերատիվի աշխատանքը:

Վարչության անդամ՝ զեկուցողը ժողովին կարձ ու պարզ ձեռվ պետք ե ծանոթացնի սպառողական ընկերության առների բոլոր պայմաններին: Այդ կնշանակի պետք ե վորոշել բնակչության սպառողական պահանջները և ցույց տալ կոռպերատիվի ու սպառողական պահանջների բավարձան համար յեղած հնարավորությունները: Այսպատակով՝ զեկուցողը պետք ե տեղեկացնի ժողովին, թե կոռպերատիվը վորքան բնակչության պարտավոր եր ծառայել և վորքանին իսկապես ծառայել ե. ի՞նչ չափով բավար կամ անբավարար են յեղել կոռպերատիվի սեփականու փոխառնված միջոցները, կարիք կլինի կանգ առնելու այսպիսի մի հարցի վրա, թե սպառողական ընկերությունը ոգտվում ե արդյոք այն բոլոր արտօնություններից, վորխորհրդային իշխանությունը տվել ե սպառողական կոռպերացիային: Արդյոք կոռպերատիվին ապրանք բաց թողնող կազմակերպությունները կոռպերատիվին չեն նեղում ասսորտիմենտ ընտրելու գործում: Կարձատեւ չեն արդյոք թույլատրվող վարկերի ժամկետները: Ծնկերությունը արմագ և հաջող ե կատարում ապրանքների փոխադրումը:

Յերբ վոր այս ձեռվ կվորոշվեն վարչության աշխատանքի համար ստեղծված բոլոր պայմանները, այն ժամանակ արդեն կարելի յե անցնել կատարված առևտրական աշխատանքի գնահատմանը:

Ամենից առաջ՝ վարչությունը ինչպես և կատարել ապրանքների պատրաստումը։ Անհրաժեշտ և թվել վարչության գնած ապրանքները։ Պետք և ցույց տալ՝ միսիայն գյուղացուն անհրաժեշտ ապրանքներ են պատրաստվել, թե վոչ։ Արդյոք չեն գնվել չծախվող, կամ գյուղի համար բոլորովին անպետք ապրանքներ։ Անհրաժեշտ և հիշել, վոր քիչ ծախվող ու չծախվող ապրանքները մի մեռած ու ծանր բեռ են դառնում կոռպերատիվ շրջանառության համար և թանգացնում են մյուս ապրանքները։ Յեթե խանութում այդպիսի ապրանքներ կան, ապա վարչությունը պարտավոր ե բացատրել՝ թե ինքը ում համար և ինչո՞ւ յե գնել այդ ապրանքները։ Մի քանի ապրանքներ միմիայն իրենց սեղոնին են պետք գալիս։ Այդպիսի ապրանքները շատ են. գերանդին, մանգաղը, խուրձ կապելու թելը, ձեռնոցները, տաք կոշիկները, այգիների համար անհրաժեշտ արճասպն ու ծծումբը և զանազան սերմացուներ, աղ, նավթ և այն։ Այս բոլոր ապրանքները ամենից ավելի թանգ արժեն ու հարկավոր են վորոշ ժամանակներում։ Վարչությունը այդ ապրանքները ժամանակին ե պատրաստել։ Այս մասին գեկուցման մեջ պետք ե հայտնել ճիշտ ու վորոշ տեղեկություններ։ Ընդհանուր ժողովի համար կարեւոր կինի իմանալ նայել այն, թե վարչությունն ապրանքները վհրտեղից ե գնել։

Ընդհանրապես սպառողական ընկերությունները ապրանքներ են գնում զանազան տեղերից։ Ապրանքներ գնում են Հայկոպցի, Հայառից, Տեքստիլ Սինդիկատից և մասնավոր մարդկանցից։ Պատահում ե, վոր վորոշ քանար ել գնում են իրենց անդամներից կամ հարեան գյուղացիներից։ Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր վարչությունը զեկուցման մեջ շեշտի, թե ապրանքները ումից են գնված և ինչ չափով։ Յեվ յեթե ապրանքները գնվել են մասնավոր առ ձանցից, այսինք վոչ կո-

ոպերատիվ ճանապարհով, անհրաժեշտ և ժողովին բացատրել, թե ինչո՞ւ վարչությունը ստիված ե յեղել ապրանքները մասնավոր անձանցից գնելու և թե վարչությունը ինչ և մտածում վոչ կոռպերատիվ ձեռվ գնումներ կատարելուն վերջ տալու մասին։

Յերբեմն պատահում ե, վոր խանութում անհրաժեշտ ապրանքներ չեն լինում. չի լինում շաքար, ձիթ, աղ, լուցկի և այլն։ Վարչությունը պարտավոր ե բացատրել, թե ինչո՞ւ այդ ապրանքները չեն յեղել։ Իսկ յեթե խանութում կուտակվել են դժվար ծախվող ու չծախվող ապրանքներ, վարչությունը պարտավոր ե այդ մասին հայտնել ընդհանուր ժողովին և պետք ե ցույց տաթե ինքը ինչ է մտածում այդ ապրանքների արագ սպառման մասին։

Ապրանքի պատրաստման աշխատանքների յեզրափակումը կատարելիս՝ լավ կլինի, յեթե գումարներով ցուցարվի, թե ապրանքների պատրաստման աշխատանքը ինչպես ե զարգացել։ Նպատակահարմար ե, վոր ժողովին այդ մասին տեղեկություն տրվի հաշվետու ժամանակի ամեն մի ամսվա ընթացքում կատարված ապրանքային գնումների մասին աշանձին։

Պատրաստումների մասին արված այդպիսի զեկուցումից ընդհանուր ժողովը կարող ե տեսնել, թե վարչությունը վորքան ուղիղ, վորքան լավ ե աշխատել և վորքան ե պաշտպանել ընկերության անդամների շահերը։ Բայց ավելի կարեւոր ե իմանալ, թե կոռպերատիվի ապրանքները ում են վաճառվել։ Այս տեսակետից, վարչությունը պարտավոր ե տալու և ընդհանուր ժողովը իրավունք ունի պահանջելու, հետեւյալ տեղեկությունները։

Ընդհանուր գումարներով ինչպես ե ընթացել տակառուրը ամեն ամսվա ընթացքում։

Ընկերությունը կատարել է ապրանքան գումարները։

Վարչությունը կոռպերատիվի ապրանքները մեծ գումարներով հո չի վաճառել մասնավոր անձանց (առևտրականներին ու միջնորդներին). Յեթե այդպիսի դեպքեր յեղել են՝ ապա վարչությունը պետք է բացատրի, թե վորոնք են յեղել այդ հակակոռպերատիվ աշխատանքի պատճառները. Ցանկալի յե, վոր վաճառքի շրջանառությունից ցույց տրվի, թե ապրանքների գոր մասն և ծախվել անդամներին, վոր մասը վոչ անդամներին և զանազան հիմնարկություններին ու կազմակերպություններին. Ապրանքների ու մթերքների գները միշտ ել շատ են հուզում կոռպերացիայի անդամներին. Զեկուցելու ժամանակ այդ բանը պետք է հաշվի առնել և անդամների ընդհանուր ժողովին պետք է տեղեկացնել, թե վարչությունը քանի տոկոս վերադիր է գալիս ապրանքների ինքնարժեքի վրա, թե կոռպերատիվի ապրանքների գները մասնավոր խանութի գներից ավելի հո չեն:

Վարչությունը պետք է ճիշտ կերպով, առանց վորևերան թագցնելու հայտնի, թե ինչպիսի գնումներից ինչքան վսասներ ե ունեցել և ինչու. Լավ կլինի նաև ցույց տալ, թե ապրանքների գնման ժամանակ ինչպէսի արտոնություններով են ոգտվել ընկերության անդամ-փայտերերը:

Փոխադրության ժամանակ առաջացած և խանութի մեջ տեղի ունեցած բոլոր պակասորդների մասին ընդհանուր ժողովին պետք է տեղեկացնել. պետք է հայտնել և այն միջնությունների մասին, վորոնցով վարչությունը մտածում է ծածկել կոռպերատիվի այդպիսի վսասները.

Յեթե ապրանքի մի մասը ապառիկ է ծախված՝ ապա անհրաժեշտ է հիշատակել, թե այդ ապառիկը ում է տրված, ինչ պայմաններով և արդյոք հուսալի յեն պարտապահները — ընկերության պարտքերը ժամանակին են ճարում:

Ավելորդ չի լինի, յեթե զեկուցողը տեղեկություններ տա նաև խանութի աշխատանքների մասին. Արդյոք վարչությունը քննել է խանութի աշխատանքները: Ինչքան շուտ-շուտ և կատարվել գործակատարի վերստուգումը:

Արդյոք լավ է վերաբերվում գործակատարը դեպի կոռպերատիվի անդամները և դեպի հաճախորդները ընդհանրապես: Խանութի վրա արվող ծախքերի նկատմամբ ևս վարչությունը պետք է ցույց տա, թե այդ ծախքերը ինչքան մեծ են. ծախքերից վորը և ինչ չափով արդեն կրծատվել ե և վոր ծախքերը դեռ կարելի կլինի կրծատել:

Յեթե վարչությունը, ապրանքների վաճառքից բացի՝ զբաղվել է նաև մեքենաներ ծախելու գործով, ապա հաշվի պետք է նաև տա այդ աշխատանքների մասին: Դյուղատներական մեքենաները կոռպերացիային տրվում են արտոնյալ պայմաններով (ցած գնով և յերկարագու վարկով): Պետությունն այդ բանն անում և նրա համար, վոր ըշբագոր յերկրագործը մեքենա գնելու հնարավորությունը ունենաւ: Այդ պատճառով կարենու և իմանալ, թե ոպառղական ընկերությունը ինչ պայմաններով և ում է ծախում պետության կողմից նրան վստահած մեքենաները: Արդյոք այդ մեքենաները գյուղի զորբաններն են զնում, թե մեքենաներն ըստանում են չքափորները և դրանով հնարավորություն են ունենում իրենց տնտեսությունը շտկելու: Անհրաժեշտ է ընդհանուր ժողովում անդամներին ծանոթացնել այն խնդրին, թե հետագայում ընակշությունը կոռպերացիայի միջոցով ինչպիսի մեքենաներ կարող ե ստանալ և ինչ պայմաններով.

Վերջացնելով առևտրական աշխատանքին վերաբերվող զեկուցումը՝ պետք է տեղեկացնել այն բոլոր անհրաժեշտ միջոցների մասին, վոր վարչության կարծիքով կարելի գործադրել սպառողների ընկերության աշխատանքները պարզացնելու և զարգացնելու համար ավելի լավացնելու և զարգացնելու համար:



V. ԿՈՈՂԵՐԱՏԻՎԻ ԱՌԱՆՁԻՆ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սպառողական շատ ընկերություններ, բացի բնակչությանը մթերքներ ու ապրանքներ մատակարարելուց՝ զբաղվում են նաև ուրիշ աշխատանքով։ Ունենում են զանազան ձեռնարկներ, որինակ՝ կոշկակարանոց, գինու գործարան, ջրաղաց, ճաշարան, մեքենաներ, ցանքսեր և այլն։

Կոռպերատիվի անդամների, այսինքն կոռպերատիվի տերերի համար շատ հետաքրք ը եւ իմանալ՝ այդ բոլորը լմկ են աշխատում, թե վատ, նրան հգուատ են տալիս թե վսաս են բերում։ Յեկ յեթե այս կամ այն ձեռնարկությունը վսասակար եւ ու անդամների համար անհրաժեշտ չի, ապա ընդհանուր ժողովը կարող եւ այդ ձեռնարկությունը փակել, լուծել պետությանը վերադարձնել կամ տալ կապալով։

Գյուղական սպառկոռպերացիայի տրամադրության տակ այսպիսի ձեռնարկներ շատ կան և նրանք բավական բազմազան են։ Դժվար եւ ասել, թե զրանցից ամեն մեկի համար հաշվետվությունը ինչ ձեռվ պետք եւ կազմակերպել։ Այդ պատճառով մենք կանգ կառնենք գլխավորապես այն ձեռնարկների վրա, վոր մեր կոռպերատիվները հաճախ են ունենում։ Իսկ մանր արտադրական ձեռնարկների ժամանք, ինչպես որինակ, կոշկակարանոցի և այլն, ցույց կը տանք միմիայն ընդհանուր հիմնական պահանջներ, վոր անհրաժեշտ են նրանց հաշվետվությունները կազմելու ժամանակ։

I Ճառարանների անվանելը

Մենք կոռպերատիվ ճաշարաններ շատ չունենք։ Նրանք գլխավորապես բացվում են շրջանային կենտրոններում և առևտրական կհնարոն յեղող գյուղերում ու ավաններում։ Յեկ այդ հասկանալի յեւ։ Այդպիսի տեղերում ամեն որ մոտակա գյուղերից ու ամբողջ շրջանից հավաք-

վում են բազմաթիվ անցորդներ ու գյուղացիներ։ Այսպիսի կոռպերատիվ ճաշարանները շատ մեծ նշան ակություն ունեն։ Գործը այնպես պետք եւ դնել, վոր անցորդյեկվորն ու տեղական գյուղացիները վոչ միայն կարողանան ճաշել ու տաքանալ այդ ճաշարաններում, այլ և կարողանան հանգստանալ և դեռ ավելին, անհրաժեշտ ե, վոր այդ ճաշարան յեկողը իր ժամանակը անց կացնի ոգտակար ու խելոք զբաղմունքներով։ Ճաշարաննում կարող են լինել լրագրներ, բարձր ընթերցումներ, պլակատներ, գրքեր և այլն. կարելի յեւ ունենալ նայեն նարդի։ Յեվ ահա վարչությունը հաշվետու զեկուցման մեջ պետք եւ խօսի այն մասին, թե ինչ չափով եւ իրագործել այս ամենը։ Պետք եւ շեշտել նաև այն հանգամանքը, թե ճաշարանը կամ ոթեանը ընկերությանը ինչքան ոգուտ են տալիս, կամ ինչքան վսաս։ Արդյոք ավելանում եւ ճաշարան կամ ոթեան հաճախախների թիվը։ Ճաշարաննում կամ ոթեանում շատ ժառայողներ կան և նրանք ինչպիսի վերաբերունք են ցույց տալիս դեպի այցելուները։ Ի՞նչ արժե ճաշը, թեյը, նախաճաշը կամ թե ոթեանում գիշերելու վարձը քանի յև։ Ճաշարանը կամ ոթեանը հաճախորդների այցելության համար հարմար ժամանակ եւ բաց լինում։ Արդյոք մաքնելը են ճաշարանի և ոթեանի սենյակներն ու սեղանները. ճաշը մաքնելը ամաններով եւ տրվում։ Չի պատահ վարձիկ վագելից խմիչքներ վաճառեն և յեթե այդ յեղել ե, ապա վարչությունը ի՞նչ միջոցներ ե ձեռք առել դրա դեմք առնելու համար։ Անհրաժեշտ ե հիշել, թե վարչությունը ինչ թերթեր և քանի որինակ և սուանում ճաշարանի ու ոթեանի համար —կմն արդյոք շաշկի, շախմատ, նարդի և ուրիշ խաղեր։ Պետք եւ շեշտել նաև այն, թե ի՞նչ բարձր ընթերցումներ են կատարվել և քանի անդամ։

Այս ամենի մասին տեղեկանալուց հնար՝ անդամների

ընդհանուր ժողովը, կամ լիազորների ժողովը, կկարողանա տեսներ, թե վարչության աշխատանքը փորձան ճիշտ է յեղել տարգելիս և թե ճաշարանն ու ոթեանն ինչքան անհրաժեշտ են բնակչության համար:

2. Մանե արտագրություններ

Սպառողական ընկերություններից չատերը ունենում են արտադրական վորոշ ձեռնարկներ: Այսիս որինակ՝ բամբակի ցանքս, ծխախոտի պլանտացիաներ, դինեգործարան, մետաքսի մանարանն, կոշիակարանոց և այլն: Նրանց մասին վարչությունը հաշվետու զեկուցման մեջ պետք ե պատասխանի հետեւյալ հարցերին:

1. Պետք ե ասի – արտադրական ձեռնարկի արտադրական հնարավորությունները վորոնք են և իրապես ինչ արտադրություն է կատարված:

Ամենից լավա այն ե, վոր ամեն ամսվա մասին առանձին տեղեկություն տրվի՝ թե ջրաղացը վորքան ցորեն և աղացել, մանարանը վորքան թել ե պատրաստել, կոշկակարանոցը վորքան կոշիկ և այլն: Այսպիսի տեղեկություններից կերեվա, թե ձեռնարկությունն ինչքան է ծանրաբեռնված յեղել աշխատանքներով և արտադրությունը ամսեամիս ինչպես և զարգացել—կրծատվել ե, թե ավելացել:

2. պետք ե ցույց տալ, թե ձեռնարկության մեջ քանի բանվոր ու ծառայող են աշխատում և նրանցից ամեն մեկի վրա արված ծախքերը փորքան են:

Լավ կլինի, յեթե ծախքերը ցույց արվեն հիմնական խմբավորումներով. այսինքն՝ բաժանված հետեւյալ խըմբերի. ծառայողների ու բանվորների ոռօճիկները, պետական տուրքերի վճարումները, շենքերի, մեքենաների ու գործիքների նորոգման ծախքերը, փառելիքին վճարված զումարները, հրդեհից ապահովագրելու վճարումները և այլ ծախքեր:

3. Յեթե արտադրած մթելքները ծախվում են կողմ-

ուակի անձանց ու հիմնարկներին և միմիայն անդամների կողմից չեն սպառվում, (որինակը՝ ցորենը, յուղը, մետաքսի թելը, բամբակը և այլն) պայա պետք ե մասնանշել, թե վարչությունը այդ ապրանքները վճրաեղ և ուժ և ծախել:

Աշխատանքի ընթացքում նկատված ըոլոր պակասությունների մասին պետք ե վարչությունը տեղեկացնի ժողովին: Պետք ե մանրամասն տեղեկություններ տանակ այն մասին, թե ձեռնարկի աշխատանքները լավացնելու համար ի՞նչ կարելի յե անհել Այդ դեպքում, արդյունաբերական ձեռնարկության աշխատանքի մասին արված այս փոքրիկ դեկուցումը բավական կլինի, վոր ժողովին մասնակցողները վորպես տերեր վերաբերվեն իրենց ձեռնարկություններում կատարվող աշխատանքներին և մտածված ու հաստատ վորոշում ընդունեն այդ ձեռնարկության ապագայի մասին:

VI. ԻՆՉՊԵՍ Ե ԿՈՂԳԵՐԱՏԻՎԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մենք արդեն ասացինք, վոր սպառողական ընկերությունը մի բարդ տնտեսություն է: Հաճախ այդ տնտեսությունը ունենում է բազմաթիվ ու տարբեր մասեր, տարբեր ձեռնարկություններ: Այդ ձեռնարկություններն ել իրենց արգյունքներով տարբեր կլինեն: Մի բանի ձեռնարկությունները շահավետ կլինեն, իսկ մյուսները վոչ: Վարչությունը ընդհանուր ժողովի առաջ հաշիվ և տալու նրանցից ամեն մեկի մասին առանձին: Բայց այդ բավական չի: Հաշվետու դեկուցման մեջ պետք ե մատնանշել, թե կոոպերատիվի ընդհանուր զրությունն ինչպես է: Այս բանը չի կարելի ասել առանց ճիշտ և մշտական հաշվառման: Հենց այդ պատճառով, ըոլոր սպառողական ընկերություններն ունեն հաշվետարներ, վորոնք վարում են ընկերության ունեցվածքի հաշիվը:

Հաշվառման հեշտության ու հարմարության համար հաշվետարները վարում են հատուկ գրքեր: Այսպես որի-

նակ՝ դրամների հաշվառման համար գործադրվում է դրամարկղային գիրքը։ Ծախքերի զրբում հաշվի են առնվում կատարվող բոլոր ծախքերը, կայքը հաշվի և առնվում ինվենտարի (կահ-կարսախների) գրքում։ Այսպիսի գրքեր շատ կան։ Բայց սպառողական կոռակերատիվի ամբողջ աշխատանքը յերեսում և կազմվող հաշվետախտակներից ու բալանսներից, Վարչությունը իր զեկուցման միջոցով ընդհանուր ժողովին պետք ե ծանոթացնի բալանսին, վորքան կարելի ե պարզ և միենալոյն ժամանակ ճիշտ կերպով։

Բալանսից պետք ե յերես, թե արդյոք մեծ ե սպառողական ընկերության տրամադրության տակ գտնվող կապիտալը։

Այդ կապիտալը կազմված կլինի զանազան արժեքներից։ Այն ե՝ դրամից, ապրանքներից և ընկերության ստանալիք պարտքերից։ Կապիտալի մի մասը կզանվի ստացված մուրհակների, ունեցվածքի և արտադրության ձեռնարկների արժեքների մեջ։

Հայտնելով ընկերության ամբողջ կապիտալի ընդհանուր գումարի մասին՝ վարչությունը պետք ե ցույց տա, թե այդ կապիտալը առանձին հաշիվներով ինչպես ե բաժանված։ Վորքանը զրամ ե, փորքանը ապրանք, ունեցվածք, պարաք և այլն։ Սպառողական ընկերության կարգադրության տակ գտնվող ամբողջ կապիտալն ել այդ ընկերության սեփականությունը չի։ Ընդհանրապես՝ այդ կապիտալի աշքի ընկնող մեծամանությունը ուսար, փոխանոնքած միջոցներից ե կազմված։ Այդպիսի միջոցները միմիայն ժամանակավորապես են գտնվում կոռակերատիվի տրամադրության տակ և իրենց ժամանակին սիրտի վերադրձվեն նրանց, ումից այդ գումարները ստացվել են։

Բալանսից յերեսում ե, թե սպառողական ընկերությունը ում և վորքան ե պարտ։ Այդ փոխ առած կապիտալի գումարը ևս պետք ե ցույց տալ ընդհանուր ժողովին՝

մատնանշելով, թե միությունը ում և վորքան ե պարտ։

Ամբողջ կապիտալի և փոխառած կապիտալի տարբերությունը կազմում է սպառողական ընկերության սեփական միջոցը։ Իհարկե, վորքան շատ են սեփական միջոցները, այնքան ավելի ուժեղ ե կոռակերատիվը։ Յեվ ընդհակառակը։ Սեփական միջոցների պակասաւթյունը սպառողական ընկերության թուլության ամենագլխավոր ու ամենաճիշտ ընորոշիչն ե։

Բացի ընդհանուր տեղեկություններից, անդամներն իրավունք ունեն վարչությունից հաշվետու տեղեկություններ պահանջել նաև ամեն մի առանձին հաշվի մասին։ Որինակ՝ ինչ փոփոխություններ են կատարվել կոռակերատիվի ունեցվածքի մեջ։ Այսքեր են և հուսալի՛ յին արդյոք պարտապանները։ Ընկերությունը ում և վորքան ե պարտ ապրանքների համար։ Վարչությունը յերբ ե մտածում մաքրել իր հաշիվները հում մթերքներ մատակարարող գյուղացիների և ուրիշների հետ։ Հաշվետուժամանակամիջոցում վարչությունը վորքան գումար և ծախսել և ինչ նպառաւակներով։

Վարչությունը կարող ե պատասխանել այսպիսի բոլոր հարցերին։ Բայց այս ամենի համար հարկավոր ե ճիշտ կերպով դրված և ժամանակին կատարվող հաշվառում։

VI. ՀԵՏԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՒՐՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ

Սովարաբար ընդհանուր ժողովները յերկար աշխատել չեն կարողունում։ Բայց մենաւյն ժամանակ անհրաժեշտ ե, վոր սպառողական ընկերության ամբողջ գործունեությունն ընթանա անդամների տված ցուցմունքների համաձայն։ Վորպեսզի, ընդհանուր ժողովի անդամների ժամանակը խնայվի և ստացվեն հետագա աշխատանքի համար անհրաժեշտ ղեկավարող ցուցմունքները, վարչությունը նախապես պետք ե կազմի աշխատանքների ծրագիր ու ծախքերի նախահաշիվ։ Բնդիհանուր ժողովը՝ ընսելով այդ

կը կատարի շտկումներ, լրացումներ, ու փոփոխումներ։ Յեվ այդ ամենից հետո՝ վարչությունը պարտավորվելու և իր աշխատանքը վարել ընդհանուր ժողովի հաստատած ծրագրի ու նախահաջվի համաձայն։

Առեարական աշխատանքի ծրագիրը կազմելիս՝ պետք է հաշվի առնել կոռպերատիվից ողափող բնակչության թիվը, այդ բնակչության գնորդական ունականութունը, և այս ու այն ապրանքի իրական կարիքը։ Այդպիսի հաշվառման հիման վրա, յեթե փոչ ճշությամբ, ապա զոնե մոտավոր շափով հնարավոր կլինի հաշվել, թե ծրագրված ժամանակամիջոցում վճր ապրանքներից վճրքան պետք կլինի պատրաստել։ Նկատի առնելով մեր կոռպերատիվների թուլությունը և ի նկատի ունելով այն, վոր առանց սեփական խոշոր միջոցների դժվար ե բավարարել բնակչության բոլոր սպառողական ու տնտեսական կարիքները, պետք ե խուսափել ապրանքների ու գնումների մեծ ցուցակ կազմելուց։ Ամենից լավ ե, վոր ցուցակի մեջ մտցեն գյուղացու համար ամենաանհրաժեշտ մթերքներն ու առարկաները միայն։ Աղա՝ պետք ե անպայման ցույց տալ, թե ինչ ապրանքներ վոր տեղից են գնվելու։

Լավ կլինի, յեթե ծրագիր կազմվի նաև արտադրական ձեռնարկների շահագործման (աշխատանքի) միասին։ Այդպիսի ծրագրում պետք ե յիշատակել, թե վարչությունը վորքան արտադրություն և սպառում ձեռնարկից պետք ե վորոշել ու հաշվել թե ինչ տեսակ և ինչ բանակության հում նյութեր են պետք վերամշակության համար։ Կարիք կա մտածելու նաև այն մասին, թե արտադրական ձեռնարկության մեջ բանի բանվոր ու ժառայող պետք ե թողնել։ Յեթե վորոշ մեքենաներ վերանորոգելու կամ գնելու անհրաժեշտություն կա, ապա այդ մասին ևս պետք ե խոսել։

Անըաժեց ե ընդհանուր ժողովին բացատրել, վոր կոռպերատիվը պարտավոր ե վարել կուլտ. կրթական աշ-

խատամնքներ, վոր անհրաժեշտ և կազմակերպել ակումբ, կոռպերացիան սիրողների խմբակ, զրույցներ, դասախոսություններ, զրքերի վաճառք, խրճիթ-ընթերցարանին կից զսակարան (կոռպերացիայի վերաբերյալ), պատի լրագիր և այլն։ Անհրաժեշտ և, վոր ընդհանուր ժողովը այս ամենի համար կոռպերատիվի գումար ոգուտից հատկացնի վորոշ տոկոս։

Կոռպերատիվ աշխատանքի բարոր ճյուղերի վերաբերյալ ծրագիր կազմելուց հետո՝ անհրաժեշտ և քննել ու նախանաշիվ կազմել առաջիկա բոլոր ծախքերի համար։ Այդ ժամանակ ընդհանուր ժողովը կտեսնի, թե իրենց ընկերությունը ինչ աշխատանք և ցանկանում տանել և այդ աշխատանքի համար ինչ ծախքեր են պահանջվում։

VIII ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՌԵՐԱՑՈՒՄԸ

Մեր ամբողջ կոռպերատիվ աշխատանքի զարգացումը ամենից առաջ և ահնից շատ կախված է այն բանից, թե բնակչությունը կոռպերատիվին ինչ չափով լրիվ և ինչ չափով ակտիվ և սասնակցում։ Իսկ կոռպերացիայի գարգացումը մեր պայմաններում շատ մեծ և շանակություն ունի դեպի սոցիալիզմ գնալու համար։ Այս բանը ամենից պարզ ու ամենից խոր կերպով առել և ընկ լենինը։

— «Մեզ մոտ, իրոք, քանի վոր պետական իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքին, քանի վոր այդ պետական ի խանությանն են պատկանում արտադրության բոլոր գործիքները, մեզ մոտ, իրոք վոր, միայն մի խնդիր և մնացել—ընակչության կոռպերացումը...» և թեկ ահա, մեր վհչ բոլոր ընկերներն են հասկանում այն բանը, թե այժմ Ռուսաստանի կոռպերացումը մեզ համար ինչ անսահման նշանակություն և ստանում։ Լենինը այսպես եր ասում կոռպերացիայի մասին՝ իր վերջին հոգ վածներից մեկում։

Կոռպերացիայի վոչ մի աշխատավոր և վոչ սի ժամ չպետք եւ մոռանա իլլիչի այս ավանդները: Համայն կոռ պերացման խնդիրը ամենորյա, միջու հարգածային ու միշտ մարտական մի խնդիր եւ յերկար տարիների համար:

Ըսդհանուր ժողովների ժամանակ սպառողական ընկերության վարչությունը հատկապես մանրամասն կերպով պետք եւ հաշիվ տա այդ մեծ աշխատանքի մասին:

Վարչությունը պետք եւ հայանի, թե ինքը ինչ միջոցներ եւ ձեռք տոել բնակչության կոռպերացուն արագացնելու համար: Պետք եւ թվել կոռպերացման համար արգած բարոր աշխատանքներն ու այդ աշխատանքների արդյունքները: Վճրքան ժարդ եւ կոռպերացված, վճրքան անդամ, փայտտերեր կան և այլն:

Իսկ վոր ամենազլխավորն եւ, այնպիս պետք եւ անել, վոր ընդհանուր ժողովին մասնակցող ամեն մի անդամը գիտակցի կոռպերացիային մասնակցելու մեծ նշանակությունը Յեվ յեթե այդ բանը արվի, աղա կաշելի յե հավատալ, վոր Դրանցից ամեն մեկը վոչ միայն իր ընտանիքի հետ միասին իրոք վոր կղաւնա կոռպերատիվի ակտիվ անդամ, այլ և կոռպերացիայի մեջ կը աշխ իր այն ընկերներին ու հարեաններին, վորոնք դեռ սպառողական ընկերության անդամներ չեն:



ՊԱՏՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Թարգմանական)

2. Լենին. — Կոռպերացիայի մասին:
3. Կումբակով. — Լենինն ու կոռպերացիան:

(ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ)

4. Պ. Զավար. — Կոռպերատիվի ցավերը:
5. Մարգո. — Կինը յեվ կոռպերացիան:
6. Գ. Օրով. — Լենինն ու կոռպերացիան (չափածո):

«Ազգային գրադարան»



NL0203189

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՌՊԵՐԱՑԻԱ“

ՅԵՐԿԱԲԱՔԱՅԵՐԵՐԻՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ¹
ՀԱՅԱՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՏԱՆԻՑ ԴՈՒՐԸ

Տարեկան 3 ռուբ. 50 կոպ.	3 ռուբ. 80 կոպեկ
Կես տարի 1 „ 80 „	1 „ 90 „
3 տարիոր 1 „	1 „ 10 „

Հասցեն՝ Յեւեվան, Շահումյան փողոց № 3 — «Հայկոստ» ի տնօքագություն